ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 19 հունվար 2022թ.

Նիստին մասնակցում էին տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի նախագահ Հայկ Վարդևանյանը, հանձնաժողովի քարտուղար՝ Սարգիս Ղազարյանը, հանձնաժողովի անդամներ՝ Աննա Սահրատյանը, Վրեժ Բեգլարյանը և Սեդա Հակոբյանը:

Օրակարգում՝

1. Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 13-ի N 63-Ն որոշման՝ նախադպրոցական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում(ՀՈԱԿ) մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի նվազեցման արտոնություններից օգտվելու համար Բյուրեղավան համայնքի ղեկավարին դիմած՝ Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ հաճախող երեխաների ծնողներից ստացված դիմումների:

Հանձնաժողովի քարտուղար Սարգիս Ղազարյանը հանձնաժողովին ներկայացրեց, որ տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնությունից օգտվելու համար ներկայացված դիմումներին կից ներկայացվել են արտոնության տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթները: Նա հանձնաժողովի քննարկմանը ներկայացրեց լրացված արտոնության տրամադրման ամփոփաթերթիկները:
Քննարկումից պարզ դարձավ, որ ներկայացված դիմումները Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 50%-ի չափով նվազեցման արտոնությունից օգտվելու հիմքով են.

- **Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի համար դիմել են.**

1) չորս և ավելի անչափահաս երեխաների ծնողներ

1. Քրիստինե Շահնազարյանը (Հայկ Դավիթի Թադևոսյանի ծնողը), Բյուրեղավան, Երիտասարդական փողոց, 23 շենք 17 բնակարան:

2. Լորետա Զոբանյանը (Նարե Գեորգիի Զոբանյանի ծնողը), Բյուրեղավան, Զորավար Անդրանիկի փողոց, 31 շենք 11 բնակարան:

3. Մարիամ Բեգյանը (Լյուսի և Սյուզի Անդրանիկի Բեգյանների ծնողը) Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 39 շենք 24 բնակարան:

Հանձնաժողովը որոշեց՝

Առաջարկություն ներկայացնել Բյուրեղավան համայնքի ղեկավարին՝

Հայկ Դավիթի Թադևոսյանի, Նարե Գեորգիի Զոբանյանի, Լյուսի և Սյուզի Անդրանիկի Բեգյանների վերաբերյալ Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ում մատուցված ծառայություններից օգտվելու համար փոխհատուցման գումարի 50%-ի չափով նվազեցման արտոնություն կիրառելու որոշում կայացնելու համար:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Հ. Վարդևանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ս. Ղազարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Սահրատյան

_____ Վ. Բեգլարյան

_____ Ս. Հակոբյան